միջոցների գործադրելուց: Մինչև անգամ երբ Գլադստոն յայտնեց, թէ եւրոպական համաձայնութիւնը այնու ամենայնիւ իր լաւ հետևանքները ունեցաւ, լորդները այդ յայտնութիւնը ընդունեցին բարձրաձայն ծիծաղով:

Որքան շատ դժուար էր Գլադստոնի համար դամբանական ճառ կարդալ արևելեան իր քաղաքականութեանը, բայց հանգամանքները այնպէս կազմվեցան, որ նա չէր կարող ուրիշ կերպ վարվել: Գլադստոն, 'ի հարկէ, գիտէր, որ իր ճառից յետոյ այլ ևս ոչ ոք յոյս չի ունենայ, որ արևելեան հարցը կարող է խաղաղութեամբ վերջանալ: Ամենքի համար հասկանալի է, որ եւրոպական համաձայնութեան անաջողութեան պատճառը ոչ թէ պետութիւնների անզօրութիւնն էր, այլ նրանց բաժանվելը զանազան խումբերի:

Գլադստոնի յայտնութիւններից երևում է, որ Արևելքը ինքն պէտք է տնօրինէ իր վիճակը: Բալկանեան թերակղզու վրա բընակվող ազգութիւնները որոնք պարտականութիւն էին համարում արգելքներ չը դնել եւրոպական համաձայն գործողութիւններին, այժմ իրանց ազատ կը զգան: Յոյները, Արևելեան-Ռումելիայի բուլղարացիները կը մտածեն իրանց անելիքի մասին: Քանի որ այդ ազգութիւնները ստիպված են անձամբ տնօրինել իրանց վիճակը, ուրեմն հասկանալի է, թէ ինչպիսի ընթացք կը ստանան արևելեան գործերը: Այժմ գործը աւելի էլ կը խըճճվի, որովհետև Եւրոպան այլ ևս չէ կարող հիմնվել Բեռլինի դաշնագրի վրա, քանի որ պետութիւնների համաձայն գործողութիւնները անկարող եղան իրագործել այդ դաշնագրի վճիռները: Ազգութիւնները ստիպված կը լինեն իրանց սեփական միջոցներով բարելաւել իրանց վիճակը, ոչ ոք այլ ևս չէ կարող պահանջել Բեռլինի դաշնագրի վըճիռների պահպանելը, եթէ Բ. Դուռը ինքը չի սկսի իրագործել նրանց:

Գլադստոնի քաղաքականութեան փոփոխվելը բաւական համակրութեամբ կընդունվի բազմաթիւ անգլիացիների կողմից, այնպէս որ նրա դրութիւնը անփոփոխ կը մնայ Անգլիայի մէջ:

ԹՈՒՐՔԻԱ

Կ. Պօլսից „Polit. Corresp." լրագրին գրում են Նոյեմբերի 5-ից: Ռիզա-փաշայի հրաժարականը ոչնչացրեց այն բոլորը, ինչ որ նա արել էր Դուլցինիօի հարցը խաղաղ ճանապարհով վճռելու համար: Այժմ բոլորը պէտք է նորից սկսել: Այդ է պատճառը, որ Դերվիշ-փաշայի յանձնարարութիւնը հանդիպում է այնպիսի դժուարութիւններին, կարծես այդ գործը նոր լինի սկսվում: Չէ կարելի երաշխաւորել գործի աջողութիւնը, չը նայելով որ Դերվիշ-փաշա լիազօր հաւատարմատար է Ալբանիայում և սուլթանից ստացել է մեծ իրաւունքներ: Կարելի է հաստատ ասել, որ եթէ ալբանացիները գիջումն անեն, այնուամենայնիւ նրանք չեն համաձայնվի, որ գործերի դրութիւնը Սկուտարիի լճի արևելեան կողմը ոչ և իցէ կերպով փոխվի: Չերնոգորցիները պնդում են, որ Դուլցինիօն երբէք ապահով չի լինի ալբանացիների արշաւանքներից, եթէ այն կէտերը, որոնց մասին բանակցում են, ալբանացիների ձեռքին կը մնան: Որովհետև ոչ մի կողմը չէ կամենում գիջումն անել, գործի դրութիւնը կարող է անփոփոխ մնալ: Ի հարկէ գործը ուրիշ կերպարանք կը ստանար, եթէ սուլթանը ստիպողական միջոցներ գործադրէր ալբանացիների դէմ, բայց Աբդուլ-Համիդ շատ անգամ յայտնել է, որ ինքն թոյլ չի տայ իր հպատակներին ջարդել, որպէս զի այդպիսով Թիւրքիայի մի մասը անցնի մի այլ պետութեանը, իսկ պետութիւնները այդ կողմից սուլթանին իրաւացի են համարում: Բացի այդ չերնոգորցիների և թիւրքերի մէջ անհամաձայնութիւններ կան նոր դաշնագրութեան այն կէտերի վերաբերութեամբ, թէ չերնոգորցիները որ ճանապարհով պէտք է մտնեն Դուլցինիօ և երբ թիւրքերը այդ քաղաքը կը դատարկեն, ինչ ժամանակամիջոցից յետոյ չերնոգորցիները պէտք է գրաւեն նրան: Զարմանալի չէ ուրեմն, որ այստեղ չեն հաւատում Թիւրքիայի խոստմունքներին: Մի դեսպան, որ վաղուց գտնվում է Կ. Պօլսի մէջ, հաւատացնում է, թէ Թիւրքիան կը յաղթէ Եւրոպային, որովհետև նա գիտէ, թէ ինքը ինչ է կամենում, իսկ Եւրոպան չը գիտէ, թէ ինչ է պահանջում: Ինչպէս երևում է յունական խնդիրը շուտով առաջնակարգ տեղ կը բռնէ: Ոչ թէ միայն Գլադստոնի մինիստրութիւնը, այլ և ռուսական կառավարութիւնը հետաքրքված է յունական հարցով: Ֆրանսիան էլ շատ պատճառներ ունի յունական հարցը պաշտպանելու համար: Նոյեմբերի 1-ին ֆրանսիական դեսպան պ. Տիսսօ խորհրդակցում էր մեծ վեզիրի հետ և առաջարկեց նրան աւելի մեծ գիջումներ անել Յունաստանին, բայց չը յիշեց Եանինան: Անգլիական դեսպանատունը մինչև այժմ համոզված է, որ հարկաւոր դէպքում Անգլիան միայնակ յանձըն կառնի Բեռլինի դաշնագրի վճիռների իրագործելը: Պ. Վիտենդորֆ չը կարողացաւ բարւացնել թիւրքաց ֆինանսների դրութիւնը: Գուրբան-բայրամի մօտենալու պատճառով Բ. Դուռը պէտք է վճարի ծառայողներին չը տուած ռոճիկի գոնեա մի մասը: Որովհետև Բ. Դուռը ստիպված էր առ ձեռն ունեցած դրամը զինուորութեան վրա ծախսել, նա ստիպված է նորից պարտք անել: Օսմանեան բանկը տուեց կառավարութեանը 15,000 թիւրքաց լիրա, իսկ յոյն բանկիր Զարիֆի 10,000: Այդ փողերով կը վճարեն ծառայողների ռոճիկները: Մինիստրական փոփոխութիւնները, ինչպէս երևում է, յետաձգված են անորոշ ժամանակով: Եթէ կը յաղթի Սայիդ-փաշայի քաղաքականութիւնը, որ միշտ խորհուրդ է տալիս ընդդիմանալ Եւրոպային, նա կը մնայ իր պաշտօնի մէջ: Թիւրքաց լրագիրները համակրութեամբ հետևում են քիւրդերի ապստամբութիւններին Պարսկաստանի մէջ: Նրանք չեն համարձակվում բացարձակ անցնել քիւրդերի կողմը, բայց նրանց խօսքերից երևում է, որ նրանք համակրում են սիւննի քիւրդերին, որոնք պատերազմում են պարսիկ հերետիկոսների հետ: Վերջին տեղեկութիւնների համեմատ շէյխ Իբադուլլահ մտադիր է մի անկախ պետութիւն կազմել և իրան թագաւոր յայտնել: Դա մեծ ցաւ կը պատճառի սուլթանին, որ կամենում էր կազմել քիւրդական միութիւն ռուսների և հայերի դէմ: Շատ կարելի է, որ սուլթանը կազմելով ալբանական միութիւն, ակամայ նպաստեց ալբանական ինքնավարութեանը: Դարդանելեան նեղուցի վրա տիրապետող բարձրավանդակների վրա բերդիֆները հողէ ամրութիւններ շինեցին, որպէս զի նրանց վրա մեծ թնդանօթներ դարսեն և խանգարեն զրահակիր նաւերի մուտքը Դարդանելեան նեղուցի մէջ: Ամբողջ նեղուցի երկարութեամբ մինաներ են դրված, որոնք կարող են ծայթվել ելեկտրականութեան օգնութեամբ և վտանգաւոր չեն առևտրական նաւերի համար: Իսկոյն լուր տարածվեցաւ, որ Բ. Դուռը Դերվիշ-փաշայից հանգստացնող լուրեր է ստացել: Նա յոյս ունի, որ ալբանացիները նրան այլ ևս դըժուարութիւններ չեն պատճառի:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 Նոյեմբերի: „Herold" լրագիրը հաղորդում է, որ մի քանի կաթօլիկ քահանաներ, որոնք լեհական վերջին ապստամբութեան ժամանակ արտաքսված էին Սիբիր, ներված են և թոյլատւութիւն են ստացել հայրենիք վերադառնալ:

ԱԼԵԿՍԻՆԱՑ, 9 Նոյեմբերի: Երէկ հանդիսով օծվեցաւ ռուս կամաւորների արձանը: Արձանը շատ փառաւոր է:

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

համբոյր, հազար ամօթ ձեզ, աշտարակցիք, որ մի բանալիք էլ չունէք, որ գոնէ կողպէք, որ դժոխքի հոգիները չը գան և այսպէս չապականեն այս դաստիարակութեան դահլիճը:

Գիւղացիների դրութիւնը տեսնելով, աշտարակցոց զարգացման, կրթութեան և քաղաքավարութեան վրա, կարծեմ, կարելի է պարզ գաղափար կազմել: Աշտարակցիք, ինչպէս հեռուից լսել էի և մօտից էլ տեսայ, մի բանի մէջ շատ առաջ են գնացել—դա հայհոյասիրութիւնն է. Հայհոյութիւնը այնքան ընդհանրացել և սովորական խօսք է դառել աշտարակցոց համար, որ ամենափոքր խօսակցութեան ժամանակն էլ մէկը միւսին շատ կեղտոտ խօսքերով հայհոյում է և ոչ մի կողմը չէ նեղանում. իսկ լուրջ բանակռիւների մէջ, Աստուած փրկէ, ազատէ. ականջները պինդ փակիր ու հեռացիր:

Ամեն տեղ հայհոյութիւն կայ, բայց աշտարակցոց մօտի հայհոյանքները ոչ մի տեղ չը կայ. Այնպիսի հայհոյանքներ են ստեղծում, որ առաջին անգամ լսողը փշաքաղվում է.—Վերջապէս առողջարար ջրից և լայնատարած այգիներից բաց, ուրիշ մխիթարութիւն չը գտայ Աշտարակում.— 4 ժամ Աշտարակում մնալուց յետոյ, վերադարձանք Մուղնի, որտեղ դեռ գտնւում էր մատաղի մորթիների կապալառուն, որ Սուրբ Գէորգի գերեզմանը սիրող մատաղի մորթին տայ. Մէկ ուրիշն էլ մատաղների էրին (պգրը) էր հաւաքում. Վերջին համբոյրը տալով Սուրբ Գէորգին, և ընկանք Էջմիածնայ ճանապարհը:

Էջմիածնի պարսպի մէջ շատ բաներ լսեցի, շատ հետաքրքիր տեղեկութիւններ հաւաքեցի, մի քանի բան էլ աչքով տեսայ, որոնց մասին առանձին նամակով կը գրեմ իր ժամանակին, առայժմ բաւականանք քչով:

Շաբաթ երեկոյին, սեպ. 26-ին Նորին Վեհափառութեան անուանակոչութեան տօնն էր. Վեհարանի տակ շատ փառաւոր երգում էին ճեմարանի աշակերտները. Լուսաւորված էին գոյնըզգոյն լապտերներով ճեմարանը և վեհարանը.— Ուխտաւորների բազմութիւնը մեծ էր. Ալէքսանդրապօլի չափխուռները դարձեալ իրանց անկարգութիւնները անամօթաբար գործում և վըշտացնում էին ուխտաւորներին. Երեք անգամ ժամասացութեան պատահեցի 2-ը դուրսը, մէկ անգամ ներսը. Ամեն անգամ մի 2 կամ 3 վարդապետ էր լինում, իսկ միաբանները երբէք չէին երևացին, երևի աւելի կարևոր գործով զբաղված կը լինէին.

Բժիշկների հետաքրքրութիւնը շարժելու համար մի դէպք պատմեմ. Կիրակի առաւօտեան աչքովս ընկաւ մի ջահիլ աղամարդ, որ ծնկեցաւ դրանը կանգնած, արտասվելով աղաչում էր. «Ո՛վ Սուրբ Էջմիածին, դու իմ եղբօրը լաւութիւն տաս». Այս խօսքերը ինձ շատ հետաքրքրեցին. Մօտեցայ գիւղացուն և հարցրի «ի՞նչ է պատահել եղբօրդ». «Ախ, աղա ջան, աչքերը սրբելով պատասխանեց գիւղացին, իմ եղբօր դարդը անհասկանալի է. Ահա մի ամբողջ տարի է, որ եղբայրս այնպիսի մի ցաւի է հանդիպել, որ մի պատառ հաց չէ կարող ուտել. Հէնց կերաւ թէ չէ, այնպէս մէկ սանջում, ծակծկծում, կսկծացում կընկնի փորի մէջը, որ Աստուած փրկէ և ազատէ, արջի պէս կը գոռայ. Հմի որ հաց չը կերաւ, ինձանից էլ, քեզանից էլ առողջ է. Ինչ ուտէ բան չը կայ, հմի որ հաց կերաւ, ցաւը կընկնի փորը. Առանց հացի էլ չէ կարող դիմանալ. չունքի ոչ մի բան հացի տեղը չի բռնի. Մեր գիւղի տիրացուն նրա բաց արեց և ասաց որ Էջմիածնիցն է. «Աստուած լաւութիւն տայ եղբօրդ» ասացի ու զարմանալով հեռացայ.

Ճաշից յետոյ մենք գնացինք Գայանէի վանքը. Այստեղ միտս ընկաւ հայր Բաստամեանցը, որին, չը գիտեմ ինչ պատճառով, ես միշտ երևակայում էի մի պարթև, փառաւոր միրուքով վարդապետ. Դրա համար էլ, երբ մի պատկառելի և երկայնահասակ վարդապետ էի տեսնում, մօտիս մարդին հարցնում էի «Սա է Բաստամեանցը». Համբուրեցինք սուրբ Կուսի գերեզմանը և կարդում էի պատերի վրա զանազան տեսակ երթևեկ ուխտաւորների գրութիւնները յանկարծ ներս ընկաւ մի ջահիլ, աղքատ միրուքով, երկար անթարով, կարճ բաձկոնը մինչև գօտիկը հագած, հողաթափներով, բարկացած մարդ. Ես չը կարողացայ իմանալ, թէ այս ներս մտնողը տէր-տէր էր, վարդապետ էր, տիրացու էր, վերջապէս ինչ կոչման մարդ էր, որովհետև այդպիսի անվայել հագուստով, առանց վեղարի, առանց վերարկուի և առանց փիլոնի վանքում ուխտաւորների մէջ մտնելը շատ անյարմար երևաց ինձ. Այդպիսի հագուստով միայն ննջարանում կարելի է երևալ, ոչ թէ վանք մտնել և ուխտաւոր ընդունել. Մինչդեռ ես այդ մարդու անվայել վարմունքի վրա զարմանում էի, ճեմարանի աշակերտներից մինը մօտեցաւ ականջիս և փսփսաց. «Սա այս վանքի վանահայր Վ. վ. Բաստամեանցն է, որի մասին դու միշտ հարց ու փորձ էիր անում, դէ, լաւ տես...»—Ես մնացի զարմացած. Ինչպէս էի երևակայում, ինչպէս տեսայ. Երկու ժամից յետոյ դարձեալ տեսայ հայր Բաստամեանցին, որ մի և նոյն անպատշաճ հագուստով Գայանէի վանքից ահագին ուխտաւորների միջից գնաց մինչև Ղազարապատի դուռը և վերադարձաւ.

Երկուշաբթի առաւօտեան մենք Շողակաթումն էինք. Վանահայրը վեղարը գլխին, կատարեալ հագուստով, փիլոնով ներս մտաւ վանքը, ընդունեց ուխտաւորներին, մի շատ դուրեկան ձայնով աւետարան կարդաց, պահպանիչ և հոգով ասեց և ճանապարհ գցեց մեզ. Թող ընթերցողը համեմատէ հ. Բաստամեանցին այս վարդապետի հետ, որը գուցէ ուսում չունէր, բայց քաղաքավարութիւն ունէր և իր կոչման պարտականութիւնները լաւ էր ըմբռնել.

Սեպտեմբերի 30-ին մտանք Երևան, որտեղ միայն մի օր կացանք, այդ պատճառով էլ համարեա ոչինչ չը տեսանք, բացի կեղտոտ, թոզոտ փողոցներից.—Այո, դպրոցներն էլ ման եկայ, մի մի քառորդ դասեր լսեցի. Բայց ինչ կարող եմ ասել այդքան քիչ տեսնելով. Այո, դասատուները մեծ մեծ ու լուսաւոր, ուսուցիչները մաքուր հագնված, դասախօսութիւնները կենդանի, մի խօսքով արտաքին փայլը կատարեալ էր, ներսը թափանցել ես չը կարողացայ.—Դուրս եկանք Երևանից.—Հոկտեմբերի 2-ին Սևանայ արծաթափայլ լճի ափին նստած սպասում էինք, որ նաւակը գայ և մեզ կղզին հասցնէ.—Երկու անգամ հրացան արձակելով, հասկացրի որ նաւակը ուզում ենք. Մէկ ժամից յետոյ բոլոր ուխտաւորներս, որպէս մի տաշեղ, օրօրվում էինք նաւակի մէջ նստած. Հէնց այս րոպէին ամենքը դառել էին ջերմեռանդ քրիստոնեայ, երեսները շուտ շուտ խաչակնքում, աղօթք անում և արտասվում էին, որ ծովից ազատվեն.—Դուրս եկանք ցամաք, մտանք Սևանայ փոքրիկ կղզին. Ի՞նչ կայ Սևանում. Ոչինչ, անշարժութիւն, մելամաղձութիւն, յուսահատութիւն, առատ ջուր, խաչեր, խաչի կըտորներ, շատ էին վանքեր, անբան վարդապետներ, հոգիմաշ սարկաւագներ, թամալ մըղըսներ և վերջապէս 26 անձինքներից բաղկացած մի անգործ միաբանութիւն, որի գլխաւոր պարապմունքն է ուտել, խմել և աղօթել ու քնել. էլ ուրիշ ոչինչ.

Այս վանքը ջրաղացներից, արտերից տարեկան 40 խալվար ցորեն եկամուտ ունի. Թիֆլիսում, Երևանում և Ելիզավետպօլում քրէհով տուած 8 սեպհական դուքաններից, ինչպէս հաստատ աղբիւրից տեղեկացայ, տարեկան արդիւնք ստացվում է 1500 ր., տարեկան 100 ր. էլ ուխտաւորներից և դէսից դէնից կունենայ.

Ուրեմն Սևանայ վանքը տարեկան եկամուտ ունի 40 խալվար արմտիքն, 1600 ր. էլ փող. Այսքան եկամուտը Սևանայ վարդապետներն ուտում են, էլի ասում են թէ, „մենք ճգնաւոր ենք, օրերս պասով և ծոմապահութեամբ ենք անցկացնում.—Սևանայ վարդապետները, եթէ ուզենան, տարեկան այնքան փող չեն կարող յետ գցել, որ գոնէ երկու աղքատ աշակերտ ուսման տան, որ և իցէ վիճակային դպրոցում. Եթէ այսպիսի մի չնչին ազգօգուտ գործ էլ չեն կամենում անել մեր ճգնաւոր հայր սուրբերը, թող արքայութիւն մտնելու յոյս չունենան, որովհետև „բաւական չէ ի չարեաց հեռանալ, այլ պարտ է բարիս գործել":

Ուխտերս անելուց և մի քիչ այս և այն կողմ մանգալուց յետոյ, կրկին մտանք նաւակը և դուրս եկանք ցամաք և ընկանք մեր ճանապարհը:

Վերջապէս 15 օր ճանապարհորդելուց, զկնի ցուրտ կուլ տալով, երկիւղից դողալով, շատ վնասներ կրելով, զանազան առարկաներ կորցնելով, շատ բան գողնալ տալով և վերջը մարդներս տանելով, Ալէքսանդրապօլից դուրս էինք եկել, կրկին Ալէքսանդրապօլ մտանք:

Ուխտաւոր